

# ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ COVID-19-Ի ԲՈՆԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Եթե ձեր աշխատավայրում տեղի ունենա COVID-19-ի հաստատված բռնկում, ձեր գործատուն պետք է քայլեր ձեռնարկի ձեր անվտանգ լինելն ապահովելու համար, ներառյալ հետևյալը.

## Կանխարգելման Ծրագիր

- Ձեր գործատուն պետք է ունենա COVID-19-ի Կանխարգելման Գրավոր Ծրագիր, որը նկարագրում, գնահատում և կարգավորում է COVID-19-ի վտանգները ձեր աշխատավայրում և աշխատողներին տրամադրում է վերապատրաստում կանխարգելման այս ծրագրի վերաբերյալ:

## Առողջական Վիճակի Ստուգում

- Գործատուները պետք է մշակեն և իրականացնեն աշխատակիցների COVID-19-ի ախտանիշների ստուգում:

## Ծանուցումներ

- Եթե 14 օրվա ընթացքում 3 կամ ավել աշխատողներ վարակվում են COVID-19-ով, ձեր գործատուն պետք է 48 ժամվա ընթացքում այդ մասին տեղեկացնի Հանրային Առողջապահության Վարչությանը:
- Գործատուները պետք է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վարակի հետ հնարավոր շփման մասին գրավոր ծանուցեն բոլոր աշխատակիցներին և այլ աշխատողներին, որոնք վարակված անձի հետ գտնվել են մինչև աշխատավայրում, երբ վերջինս վարակող է եղել:<sup>1</sup>

## Դիմակներ

- Բերանը և քիթը լավ ծածկող դիմակներ պահանջվում է կրել վարակի հետ շփված բոլոր աշխատողներից, երբ նրանք աշխատում են փակ տարածքում կամ ընդհանուր փոխադրամիջոցում: Դիմակներ պահանջվում է կրել նաև բացօթյա տարածքներում, եթե աշխատողները չեն կարողանում պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն ուրիշներից:
- Գործատուները պետք է տրամադրեն դեմքը լավ գրկող բժշկական և շնչառական դիմակներ (օրինակ՝ N95, KN95, KF94) այն բոլոր աշխատողներին, որոնք պահանջում են դրանք:
- Գործատուները պետք է փակցնեն ցուցանակներ՝ դիմակ կրելու ցուցումներով:

## Թեստավորում

- Գործատուները պետք է առաջարկեն թեստավորում վարակի հետ հնարավոր շփում ունեցած բոլոր աշխատողներին՝ առանց լրացուցիչ ծախսերի և առնվազն շաբաթը մեկ անգամ: Սա չի կիրառվում, եթե աշխատակիցները վարակի բռնկման ընթացքում աշխատավայրում չեն գտնվել կամ վերջերս ապաքինվել են COVID-19-ից և չունեն ախտանիշներ:
- Գործատուները պետք է աշխատողներին վճարեն թեստավորման ժամանակահատվածի համար, նույնիսկ եթե թեստավորումն անցկացվի աշխատավայրից դուրս և աշխատողի ոչ սովորական աշխատանքային ժամերին:

## Արձակուրդ

- Գործատուները պետք է COVID-19-ով վարակված աշխատողներին և այն աշխատողներին, որոնք սերտ շփում են ունեցել վարակված անձի հետ, սակայն թեստ չեն հանձնել, հայտնեն, որ նրանց չի թույլատրվում աշխատել, քանի դեռ նրանք չեն բավարարում Հանրային Առողջության՝ աշխատանքի վերադառնալու չափանիշները<sup>2</sup> (եթե այլ բան նախատեսված չէ Բռնկման Բննության Թիմի կողմից):
- Գործատուները պետք է առաջարկեն վճարովի արձակուրդ (հայտնի՝ որպես բացակայության վճար) այն իրավասու աշխատողներին, որոնք շփվել են COVID-19-ի վարակի հետ աշխատանքի ընթացքում:<sup>3</sup> Աշխատակիցները չեն կարող վրեժխնդիր լինել աշխատողից այդ վճարը պահանջելու համար:

## Օդափոխություն

- Գործատուները պետք է հավաստիանան, որ աշխատանքային տարածքներում կա օդի լավ հոսք՝ օդափոխության համակարգերի արդյունավետ կիրառմամբ՝ ավելի լավ օդափոխության ապահովման և օդի որակի բարելավման համար:

Եթե ունեք աշխատավայրում վարակի բռնկման հետ կապված անվտանգության մտահոգություններ՝

- Խոսեք ձեր միության ներկայացուցչի հետ:
- Բողոք ներկայացրեք Cal/OSHA-ին՝ զանգահարելով 833-579-0927 հեռախոսահամարով:
- Անանուն բողոք ներկայացրեք Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն՝ զանգահարելով 888-700-7995 հեռախոսահամարով:

1. Վարակիչ ժամանակահատվածի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ [dir.ca.gov/dosh/coronavirus/COVID19FAQs.html#workCases](http://dir.ca.gov/dosh/coronavirus/COVID19FAQs.html#workCases)

2. Տե՛ս Հանրային Առողջության՝ աշխատանքի վերադառնալու չափանիշների Աղյուսակ 1-ը՝ [ph.lacounty.gov/acd/ncorona2019/docs/returntoworktables.pdf](http://ph.lacounty.gov/acd/ncorona2019/docs/returntoworktables.pdf)

3. Բացակայության վճարի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ [dir.ca.gov/dosh/coronavirus/COVID19FAQs.html#exclusions](http://dir.ca.gov/dosh/coronavirus/COVID19FAQs.html#exclusions)

Հիվանդության Հիմքով Լրացուցիչ Վճարովի Արձակուրդի մասին տեղեկությունների համար տե՛ս՝ [dir.ca.gov/dlse/COVID19Resources/2022-SPSL-FAQs.html](http://dir.ca.gov/dlse/COVID19Resources/2022-SPSL-FAQs.html)

